ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

_____2011թ. №_____-Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ N 22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 3-րդ հարկի հ.9 երեք սենյականոց բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Սուրիկ Դավթյանին, Ռուզաննա Դավթյանին, Անի Դավթյանին, Քնար Դավթյանին, Էլեն Աբրահամյանին, Էլիզա Աբրահամյանին, Գագիկ Պետրոսյանին և Սուսաննա Արզաքանցյանին:

2. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 6-րդ հարկի հ.60 երեք սենյականոց բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Ալբերտ Մելքոնյանին, Կարինա Մելքոնյանին, Աննա Մելքոնյանին, Արտաշես Մելքոնյանին:

3. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 3-րդ հարկի հ.18՝ երեք սենյականոց բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Գրիգոր Գասպարյանին, Հայկ Գասպարյանին, Հասմիկ Գասպարյանին, Նվարդ Հարությունյանին:

4. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 3-րդ հարկի հ.49՝ երեք սենյականոց բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Ռիտա Զոհրաբյանին, Հեղինե Մուսայելյանին, Մելանյա Մուսայելյանին:

5. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 5-րդ հարկի հ.57 երկու սենյականոց բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Խրիստաֆոր Խաչատրյանի ընտանիքի յոթ անձին՝ Խրիստաֆոր Խաչատրյանին, Արման Խաչատրյանին, Նարե Խաչատրյանին, Մարի Խաչատրյանին, Արեն Խաչատրյանին, Հասմիկ Ավետիսյանին և Գոհար Հովսեփյանին:

6. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 4-րդ հարկի հ.52 երկու սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Սեդա Հարությունյանին, Անդրանիկ Զիրոյանին, Գոհարիկ Զիրոյանին, Արտուր Զիրոյանին, Գայանե Զիրոյանին, Սեյրան Հարությունյանին, իսկ հ.51 մեկ սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Արամ Հարությունյանին, Էդուարդ Վարդանյանին, Բելլա Խաչատրյանին, Դիանա Զիրոյանին, Սյուզաննա Զիրոյանին, Ռաֆիկ Զիրոյանին:

7. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 5-րդ հարկի հ.14 մեկ սենյականոց բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Աշոտ Ասլեսյանին, Մաքրուհի Ասլեսյանին, Մարիամ Ասլեսյանին, Հակոբ Ասլեսյանին և ժենիկ Պետրոսյանին։

8. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 7-րդ կետում նշված բնակարանի նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո՝ երկամսյա ժամկետում, Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 6-րդ հարկի հ. 17 երկու սենյականոց բնակարանը փոխանակել սույն որոշման 7-րդ կետում նշված և Աշոտ Ասլեսյանի ընտանիքին նվիրված բնակարանի հետ՝ փոխանակվող բնակարանների նախահաշվային արժեքի տարբերությունը սույն կետում նշված ժամկետում՝ մինչև փոխանակության պայմանագիր կնքելը, վճարելու պայմանով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքում /բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի/ քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին>> հ.682 որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն՝ նախատեսվում է Երևան քաղաքում 2011 թվականին քանդել 4-րդ կարգի վթարային Շինարարների փողոցի հ.15 շենքը ամբողջությամբ:

Շինարարների փողոցի հ.15 քանդման ենթակա շենքի 33 բնակարաններից 28-ի վերաբերյալ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշումը կայացվելու է Երևանի քաղաքապետի որոշումներ ՝ պետական միջոցներով կառուցված բնակարանների հատկացման միջոցով:

5 ընտանիքների վերաբերյալ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու որոշում, քանի որ վերոհիշյալ ընտանիքների մասով որոշմամբ հաստատված կարգի համաձայն մեկ սենյակ պակաս տրամադրելու սկզբունքը կիրառելի չէ՝ պայմանավորված նրանով, որ Երևանի քաղաքապետարանի տնօրինությանը փոխանցված պետության միջոցներով կառուցված բնակարանների քանակը և կառուցվածքը հնարավորություն չի տալիս ապահովելու ներքոհիշյալ ընտանիքների վերաբնակեցումը: Ելնելով շենքի շտապ քանդման անհրաժեշտությունից՝ բնակարանների ամրակցումը կատարվում է Երևան համայնքի միջոցներով Սիսակյան փողոցի 22 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից:

1.Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.31 երեք սենյականոց ազատված բնակարանը հետագա քայքայումից պահպանելու համար, Երևանի Աջափնյակ համայնքի <<Շ և ՇՇ>> ՓԲԸ կողմից 2000 թվականի մայիսի 17-ին տրված կարգադրության համաձայն որպես մթերանոց հատկացվել է Սուրիկ Դավթյանի ընտանիքին, որը ներկայումս բաղկացած է ութ անձից: Սուրիկ Դավթյանի ընտանիքը 2000 թվականից հաշվառված բնակվել է վերը նշված բնակարանում (հիմք 30.05.2011թ. Մաշտոցի վարչական շրջանի անձնագրային բաժնի կողմից 30.05.2011թ. տրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքը): Ընտանիքի կազմը՝ Սուրիկ Դավթյան, Ռուզաննա Դավթյան, Անի Դավթյան, Քնար Դավթյան, Էլեն Աբրահամյան, Էլիզա Աբրահամյան, Գագիկ Պետրոսյան և Սուսաննա Արզաքանցյան:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական կենտրոնի 17.06.2011թ. հ.ՎՄ-2/2235 գրության համաձայն ընտանիքի անդամների անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

2.Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.28 երեք սենյականոց ազատված բնակարանը հետագա քայքայումից պահպանելու համար, Երևանի Մաշտոցի շրջխորհրդի գործկոմի ԲՏԱ վարչության 26.10.1994թ. հ.19 կարգադրությամբ հ.28 բնակարանը հատկացվել է շրջանի ՆԳ աշխատակից Ա.Մելքոնյանի ընտանիքի օգտագործմանը որպես խորդանոց: Վերը նշված բնակարանում 1999 թվականից հաշվառված բնակվում են Ալբերտ Մելքոնյանը, Կարինա Մելքոնյանը, Աննա Մելքոնյանը, Արտաշես Մելքոնյանը, Վարդուշ Չիլինգարյանը (հիմք՝ Մաշտոցի վարչական շրջանի անձնագրային բաժնի կողմից 30.05.2011թ. տրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքը):

Աջափնյակ և Դավթաշեն համայնքների 1-ին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 5-ի / գործ հ.2-1382/ վճռի համաձայն Ալբերտ Մելքոնյանը և Կարինա Մելքոնյանը ամուսնալուծվել են: Վճիռը չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական կենտրոնի 13.06.2011թ. հ.ՎՄ-2/2120 և հ.ՎՄ-2/2034 գրությունների համաձայն՝ ընտանիքի անդամների անվամբ Հայաստանի

Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ։

3.Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.8 երեք սենյականոց ազատված բնակարանը հետագա քայքայումից պահպանելու համար, Երևանի Աջափնյակ համայնքի Շ և ՇՇ ՓԲԸ-ի 14.05.2002թ. հ.25 կարգադրությամբ հ.8 բնակարանը հատկացվել է Գրիգոր Գասպարյանի ընտանիքի օգտագործմանը որպես խորդանոց։ Վերը նշված բնակարանում 2002 թվականից հաշվառված փաստացի բնակվում են Գրիգոր Գասպարյանը, Նվարդ Հարությունյանը, Հայկ Գասպարյանը, Հասմիկ Գասպարյանը (հիմք՝ Մաշտոցի վարչական շրջանի անձնագրային բաժնի կողմից 20.04..2011թ. տրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքը)։

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական կենտրոնի 08.07.2011թ. հ.ՎՄ-2/2522 գրության համաձայն ընտանիքի անդամների անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ։

4. Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.58 երեք սենյականոց ազատված բնակարանը հետագա քայքայումից պահպանելու համար, Երևանի Աջափնյակ համայնքի Շ և ՇՇ ՓԲԸ-ի 02.12.2002թ. հ.79 կարգադրությամբ հ.5 բնակարանը հատկացվել է Ռիտա Զոհրաբյանի ընտանիքի օգտագործմանը, որպես խորդանոց։ Վերը նշված բնակարանում 2002 թվականից հաշվառված փաստացի բնակվում են Ռիտա Զոհրաբյանը, Հեղինե Մուսայելյանը, Մելանյա Մուսայելյանը։ Հեղինե Մուսայելյանը ունի 28 շաբաթական հղիություն։

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական կենտրոնի 13.06.2011թ. հ.ՎՄ-2/2128 գրության համաձայն ընտանիքի անդամների անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ։

5. Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.19 երկու սենյականոց ազատված բնակարանը հետագա քայքայումից պահպանելու համար, Երևանի Աջափնյակ համայնքի <<Շ և ՇՇ>> ՓԲԸ կողմից 2000 թվականի հուլիսի 10-ին տրված կարգադրության համաձայն որպես մթերանոց հատկացվել է Խրիստաֆոր Խաչատրյանի ընտանիքին։ <<Լենինգրադյան հ.48/1>> համատիրության կողմից 27.05.2011թ. տրված հ.113 տեղեկանքի համաձայն՝ վերը նշված մթերանոցում բնակվում է Խրիստաֆոր Խաչատրյանի ընտանիքը յոթ անձով՝ Խրիստաֆոր Խաչատրյան, Արման Խաչատրյան, Նարե Խաչատրյան, Մարի Խաչատրյան, Արեն Խաչատրյան, Հասմիկ Ավետիսյան և Գոհար Հովսեփյան։ Խրիստաֆոր Խաչատրյանը 1-ին խմբի հաշմանդամ է՝ հիմք հ.59029 վկայականը։

Երևանի քաղաքի Շահումյանի շրջանի ժողդատարանի 1994թ. մարտի 16-ի վճռով Աջափնյակ և Դավթաշեն համայնքների 1-ին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 5-ի / գործ 2-148, 1994թ./ վճռի համաձայն Հասմիկ Խաչատրյանը և Խրիստաֆոր Խաչատրյանը ամուսնալուծվել են։ Վճիռը չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ։

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական կենտրոնի 06.06.2011թ. հ.ՎՄ-2/1990 գրության համաձայն ընտանիքի անդամների անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և 2000 թվականից առ այսօր Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի ձեռք բերում և օտարում չի կատարվել։

6.Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.13 մեկ սենյականոց ազատված բնակարանը հետագա քայքայումից պահպանելու համար, Երևանի Աջափնյակ համայնքի <<Շ և ՇՇ>> ՓԲԸ կողմից հ.62 կարգադրության համաձայն որպես մթերանոց հատկացվել է Ասլեսյանների ընտանիքին, որը ներկայումս բաղկացած է հինգ անձից։ Աշոտ Ասլեսյանի ընտանիքը 2005 թվականից հաշվառված բնակվել են վերը նշված բնակարանում (հիմք <<Լենինգրադյան փողոցի հ.48/1>> համատիրությունից կողմից 27.05.2011թ. տրված հ.129 տեղեկանքը)։

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական կենտրոնի

03.06.2011թ. հ.ՎՄ-2/1966 գրության համաձայն ընտանիքի անդամների անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ։

Ասլեսյանի ընտանիքը դիմել է Երևանի քաղաքապետին, որ իր ընտանիքին հասանելիք մեկ սենյականոց բնակարանի փոխարեն իրենց տրամադրեն երկու սենյականոց բնակարան, և պարտավորվում են երկու սենյականոց բնակարանի ավել մակերեսի համար կատարել վճարում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**